**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 հուլիսի 2026 թվականի N 435-Ա

**«ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/77» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/77» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2026թ. հունիսի 23-ի N 2 արձանագրության արդյունքները, հիմք ընդունելով, որ «ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ը սահմանված ժամկետում ներկայացրել է ստորագրված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները՝ տուժանքի մասին համաձայնագրերի ձևով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. «ՏՐԱՆՍ ՇԻՆ» ՍՊԸ-ն հետ կնքել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր և Լեռնահովիտ բնակավայրերի փողոցների նշագծման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՇՁԲ-26/77» ծածկագրով պետական գնման պայմանագիր:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 հուլիսի 2026 թվականի  N 436-Ա

## ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԽՈՏՀԱՐՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 76, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 62-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-053-0201-0001 կադաստրային ծածկագրով 100.19828 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարքը վարձակալությամբ տրամադրել Գագիկ Վոլոդյայի Հարոյանին:

2.Գագիկ Վոլոդյայի Հարոյանի հետ կնքել խոտհարքի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 1.132.240 (մեկ միլիոն հարյուր երեսուներկու հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ վարձավճարով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ Ու Մ**

06 հուլիսի 2026 թվականի N 437-Ա

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-008-0078-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով քաղաքացի Սարգիս Ժորիկի Ղանդիլյանի (ծնված՝ 26.06.1978թ.) դիմումը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 18022026-06-0012 վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 20268P5RDX, «ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ կետերով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրում գտնվող 06-008-0078-0003 կադաստրային ծածկագրով 0.0607436 հեկտար մակերեսով հողամասի վրա 2010 թվականին ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Տաշիր համայնքի Տաշիր քաղաքում գտնվող, 06-008-0078-0003 կադաստրային ծածկագրով 0.0607436 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային

նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 19.2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անասնաշենքը, 24.16 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հատակագիծը, փաստացի չափագրման արդյունքում հողամասի մակերեսը կազմում է 0.0607436 հա:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սարգիս Ժորիկի Ղանդիլյանի (2/3), Սիրվարդ Վիլսոնի Ղանդիլյանի (1/3) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

4. Սարգիս Ժորիկի Ղանդիլյանին և Սիրվարդ Վիլսոնի Ղանդիլյանին՝

1) համայնքային բյուջե վճարել 44 600 (քառասունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ օրինականացման վճար (հաշվեհամար՝ 900275081124),

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ Ու Մ**

06 հուլիսի 2026 թվականի N 438-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3 մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 121-Ն որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Բաժին 5, խումբ 2, դաս 1-ի 4657 հոդվածից 1000000 (մեկ միլիոն ) դրամը տեղափոխել բաժին 2, խումբ 2, դաս 1-ի 4241 հոդված:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com


## Ո Ր Ո Շ Ու Մ

06 հուլիսի 2026 թվականի   N 439-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ

Հիմք ընդունելով քաղաքացի Արշավիր Աղեկյան Ալեքսանի (ծնված՝ 23/10/1957թ.) դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 479958 վկայականը, «05»նոյեմբերիի 2025թ. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/1008/02/24 վճիռը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սա հմանելու մասին» N 108-Ն որոշումով,

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Մեծավան համայնք տնամերձ հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Մարզ Լոռի, համայնք Տաշիր, գյուղ Մեծավան, Անտառային փողոց, 39 հողամաս հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06132E2UKKLN:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 հուլիսի 2026 թվականի N 440-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՆԺԵԼԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ»-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Անժելա Հայրապետյան»-ի 2026 թվականի հուլիսի 06-ի N120-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Լեռնահովիտ, Հրապարակ 6 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Անժելա Հայրապետյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հուլիսի 2026 թվականի N 441-Ա

## «ՊՐԵՍ ՍՏԵՆԴ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հուլիսի 06-ի N126-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 196/1 հասցեում գործող «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ եռամսյակի համար ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հուլիսի 2026 թվականի N 442-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՀԲԱԶՅԱՆ»-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Հայկանուշ Շահբազյան»-ի 2026 թվականի հունվարի 13-ի N16-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնք, բնակավայր Գոգավան, 1-ին փողոց, թիվ 13-րդ հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Հայկանուշ Շահբազյան»-ի հայտը բավարարել և նրան տալ ծխախոտի արտադրանքի և ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն 2026 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ТАШИР LORI REGION TASHIR MUNICIPALITY ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ РА * 06966995 *

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

06 հուլիսի 2026 թվականի N 443-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԴՈՒՄԻԿՅԱՆ ՔԵՐՈԲ ՍԵՐԳՈՅԻ»-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Դումիկյան Քերոբ Սերգոյի»-ի 2026 թվականի հուլիսի 06-ի N123-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ.Դեմիրճյան փողոց, տուն 115 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Դումիկյան Քերոբ Սերգոյի» հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ`** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

06 հուլիսի 2026 թվականի N 444-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՎԱՆԻԿ ԱՐՄԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ»-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Վանիկ Խաչատրյան Արմենի» 2026 թվականի հուլիսի 06-ի N122-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք Տաշիր, Երևանյան փողոց, խանութ թիվ 197/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Վանիկ Խաչատրյան Արմենի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

06 հուլիսի 2026 թվականի   N 445-Ա

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԼՈՒՍԻՆԵ ԱՍԼԱՆՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ»-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Լուսինե Ասլանյան Հրաչիկի»-ի 2026 թվականի հուլիսի 06-ի N121-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 7-րդ թաղամաս, Շահումյան փողոց, թիվ 17 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Լուսինե Ասլանյան Հրաչիկի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 06
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

07 հուլիսի 2026 թվականի N 446-Ա

### «ՏԱՇԻՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանարպետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» N02-Ն հրամանով հաստատված կարգի 1-ին կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. 2026 թվականի օգոստոսի 07 -ին՝ ժամը 14:30-ին անցկացնել «Տաշիրի մշակույթի կենտրոնն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ:

2. Մրցույթն անցկացնել Տաշիրի համայնքաետարանի նիստերի դահլիճում:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 07
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հուլիսի 2026 թվականի N 447-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 2-Ի N 424-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 2-ի «Անշարժ գույքի վերահասցեավորման մասին» N 424-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման 1-ին կետը խմբագրել և շարադրել հետևյալ շարադրությամբ՝

«1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Տաշիր քաղաք,Կոմիտասի 5-րդ փողոց 19 հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Մարզ Լոռի, համայնք Տաշիր, քաղաք Տաշիր,Կոմիտասի փողոց 10 բնակելի տուն հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06011BNCWAZJ»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 07
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

07 հուլիսի 2026 թվականի N 448-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

Սույն թվականի հուլիսի 10-ին , ժամը՝ 11:00-ին հրավիրել Տաշիր համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի հաղորդումը 2026 թվականի բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին,

2. Հայստանի Հանրապետությաան Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 108-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2027-2029 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին,

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին,

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին,

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում ընդգրկվող, պետական սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության տրամադրմանը համաձայնություն տալու մասին,

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին պատկանող հողամասերը աճուրդով օտարելու մասին,

8. «Մունք» տեխնոդպրոցին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 07
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com


## Ո Ր Ո Շ Ու Մ

07 հուլիսի 2026 թվականի N 449-Ա

## ԲԱԺԱՆՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ժաննա Յավրումյանի դիմումը (ծնված 25.04.1973թ.), անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման թիվ 2182վկայականը, «Մովսեսկոշին» ՍՊԸ-ի կողմից կազմված բաժանման հատակագիծը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 33-րդ, 50-րդ, 51-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր Լենինի փողոց 69, 06-008-0081-0021 կադաստրային ծածկագրով բաժանված անշարժ գույքերին տրամադրել՝ 0,070722 հա մակերեսով անշարժ գույքին ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Կ. Դեմիրճյան փողոց, 69 բնակելի տուն, հասցեն (փոստային դասիչ՝ 2111), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի ծածկագիր՝ 06011M2CSWPP, 0,011990 հա մակերեսով անշարժ գույքին ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Կ. Դեմիրճյան փողոց, 69/1 հողամաս հասցեն (փոստային դասիչ՝ 2111), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի ծածկագիր՝ 06011SZBUYQF:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 07
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 9.
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հուլիսի 2026 թվականի N 450-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Նորիկ Նիկալի Սուքիասյանի կողմից լիազորված անձ՝ Գարեգին Նիկալի Սուքիասյանի (ծնված՝ 27.02.1967թ.) դիմումը, 22.02.1992թ. կազմված անշարժ գույքի տեխնիկական անձնագիրը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, Տաշիր քաղաքում գտնվող, 06-008-0033-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, Տաշիր քաղաք, Վան զանգվածի 2-րդ փողոց, 42 բնակելի տուն հասցեն (փոստային դասիչ՝ 2101), համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06011AQESQH3:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 08
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ Ու Մ**

09 հուլիսի 2026 թվականի   N 451-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԿԱՐԻՆԵ ՄԻՇՈՅԻ ԲԵԶՈՅԱՆ»-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄԱՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Կարինե Միշոյի Բեզոյան»-ի 2026 թվականի հուլիսի 08-ի N217-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 45 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Մյասնիկյան փողոց, թիվ 25 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Կարինե Միշոյի Բեզոյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 09
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ Ու Մ**

09 հուլիսի 2026 թվականի N 452-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՄԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ»-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Մարինե Պետրոսյան»-ի 2026 թվականի հուլիսի 058-ի N128-26-րդ հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնք, գ. Մեծավան, Զորավար Անդրանիկի փողոց, թիվ 41 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Մարինե Պետրոսյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլատվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հուլիսի 09
ք.Տաշիր